տացելոց 'ի Տէր հին և նոր կտակարանաւ հաւատալի է արարչագործութիւնն ամենակարօղին Աստուծոյ մերոյ, որում գրէ ծայրագոյն մարգարէն Մովսէս, զի արարիչն ամենայն արարածոց անսկիզբ և անվախճան միմիայն Աստուած մեր թէպէտ 'ի հողոյ ստեղծեաց բնական բնութիւն մարդոյ, այլ Աստուածային Շնչաւն փչեաց զմեզ՝ շնորհելով Հոգի բանական, որում կենդանացաք, և եւ ծայրագոյն իշխանութիւն նախահօրն մերոյ Ադամայ, զի թագաւորեսցէ 'ի վերայ ամենայն բնական անասուն կենդանեաց որք 'ի վերայ երկրի և եւ զօրութիւն Հոգւոյ նորա բանականութիւն, զի կարօղ լինիցի իմաստութեամբ կառավարել հնազանդեցելոց իւրոյ, և նշան մի ծայրագոյն եթող 'ի մէջ մեր սահմանելով Օրէնս բարիս՝ այսինքն Պատուէրն 'ի վերայ Ադամայ, զի պահեսցէ հրամանս Տեառն, զի սովաւ ծանիցէ ամենայն արարած որ ոչ ոք այլ արարածք կարօղ լինիցի հրամայել 'ի վերայ բնութեան մարդոյ, բայց միայն անսկիզբ և արարիչն Աստուած. և ոչինչ այլ հարկ 'ի վերայ բնութեան մարդոյ եղև, բայց հնազանդելոյ և պահելոյ Պատուէր Տեառն արարչին իւրոյ. և պատուէրն այն ինքն ցուցանէ զինքն իբր շնորհ արարչի և Տեառն Ամենակարօղի, զի ոչ խիստ և ոչ խոշոր և ոչ դժուարին բանիւ, բայց միայն չուտել 'ի պտղոյ ծառոյն գիտութեան բարւոյ և